Արձանագրություն N 4

ՋԳՀ-ԱՇՁԲ-2018/1 ծածկագրով՝ Չափաբաժին 1՝ «Ջերմուկ համայնքում ըմպելասրահից դեպի «քարայծ» ճեմուղու բարեկարգման», Չափաբաժին 2՝ «Ջերմուկ համայնքի Զախափնյա թաղամասի բակային տարածքների բարեկարգման», Չափաբաժին 3՝ «Ջերմուկ համայնքում Մյասնիկյան փողոցի վերջնամասից, նախկին Ջերմուկ հյուրանոցից սկիզբ առնող դեպի ջրվեժ ճեմուղու բարեկարգման» աշխատանքների մրցույթի ընթացակարգի հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման նիստի

ք. Երևան

«16» «ապրիլի » 2017թ.
ժամը՝ 12:00

Հանձնաժողովի նախագահ

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)	Սամվել Առաքելյան
անդամներ ՝	
1.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Սարգիս Հովհաննիսյան
2.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Էդուարդ Ջանջուղազյան
3.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Արթուր Սողոմոնյան
4.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Արեգ Եղիյան
5.Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ)	Լիլիթ Սեդրակյան

1. ՋԳՀ-ԱՇՁԲ-2018/1 ծածկագրով ընթացակարգի անգործության ժամկետի ընթացքում ստացված բողոքի վերաբերյալ

(Ս.Առաքելյան)

1.1 ՋԳՀ-ԱՇՁԲ-2018/1 ծածկագրով մրցույթի անգործության ժամկետի ընթացքում «Մավշին» ՍՊԸ-ի կողմից 20.03.2018թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացվել էր բողոք, որով ընկերությունը պահանջում էր դադարեցնել հանձնաժողովի 12.03.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրությամբ, 19.03.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված բոլոր որոշումները՝ «Մեծ Հիմք» Ա/Կ-ի մասով, ինչպես նաև 19.03.2018թ. պայմանագիր կնքելու մասին որոշումը:

26.03.2018թ. տեղի ունեցավ բողոքարկման խորհրդի առաջին նիստը, որի ընթացքում պատվիրատուն ներկայացրեց իր դիրքորոշումը և որոշվեց հաջորդ նիստի ժամանակ հրապարակել խորհրդի որոշումը:

30.03.2018թ. «Մավշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացվեց ի լրումն գրություն, որով ընկերությունը հայտնում էր, որ «ՄԵԾ ՀԻՄՔ» ԱԿ-ն 2017թ. հուլիսի 25-ի ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ ՍՑ-ԱՄ-2017/25 որոշմամբ ընդգրկվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 3 տարի ժամկետով:

05.04.2018թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի նիստում պարզվել է, որ բողոքարկող կողմը ետ է վերցրել իր բողոքը:

06.04.2018թ. Պատվիրատուի կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացվեց հարցում՝ արդյոք «ՄԵԾ ՀԻՄՔ» ԱԿ-ի հայտը ենթակա է մերժման ՀՀ գնումների մասին օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, քանի որ ՀՀ ֆինանսների նախարարության ՀՀ գնումների համակարգի «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակ»-ում «ՄԵԾ ՀԻՄՔ» ԱԿ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ

նշված էր, որ 26.01.2018թ.-ից «ՄԵԾ ՀԻՄՔ» ԱԿ-ն հանվել է ցուցակից ժամկետի լրացման հիմքով, ինչի հիման վրա և գնահատող հանձնաժողովը «ՄԵԾ ՀԻՄՔ» ԱԿ-ին համարել է մասնակցության իրավունք ունեցող կազմակերպություն: Սակայն 05.04.2018թ. վերը նշված ցուցակում կատարվել է փոփոխություն և «ՄԵԾ ՀԻՄՔ» ԱԿ-ն կրկին ներառվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մինչև 25.07.2020թ. 11.04.2018թ. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացվեց պարզաբանում, որ «ՄԵԾ ՀԻՄՔ» ԱԿ-ն 25.07.2017թ-ից հաշված 3 տարի ժամկետով իրավունք չունի մասնակցելու Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից կազմակերպվող գնման ընթացակարգերին:

2. Հանձնաժողովը որոշեց՝

(Ս.Առաքելյան)

2.1 «ՋԳՀ-ԱՇՁԲ-2018/1» ծածկագրով մրցույթի մասնակից **«ՄԵԾ ՀԻՄՔ» ԱԿ-ի հայտը մերժել բոլոր չափաբաժինների մասով:**

2.2 «ՋԳՀ-ԱՇՁԲ-2018/1» ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին՝ **«Գամշին» ՍՊԸ-ին առաջին և երկրորդ չափաբաժինների համար:**

2.3 **«Գամշին» ՍՊԸ-ին** ծանուցել, որ հրավերով սահմանված կարգով ծանուցումը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային ձևով ներկայացնի հրավերով պահանջվող փաստաթղթերը՝ ուղարկելով դրանք Պատվիրատուի հետևյալ էլեկտրոնային հասցեով՝ l.sedrakyan@atdf.am՝ հաստատելով դրանք էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

2.4 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել՝ «ՋԳՀ-ԱՇՁԲ-2018/1» ծածկագրով մրցույթի մասնակիցների մասին պահանջվող տեղեկատվությունը ստանալու նպատակով:

2.5 Պատվիրատուի կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնել հարցում՝ արդյոք թիվ ՋԳՀ-ԱՇՁԲ-2018/1 ծածկագրով մրցույթում Չափաբաժին 3՝ «Ջերմուկ համայնքում Մ.ասնիկյան փողոցի վերջնամասից, նախկին Ջերմուկ հյուրանոցից սկիզբ առնող դեպի ջրվեժ ճեմուղու բարեկարգման» աշխատանքների համար նվազագույն գին առաջարկած **«Մավշին» ՍՊԸ-ի** հայտը ենթակա է մերժման, եթե նրա կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնագրի վրա նշված է, որ այն կազմվել է 2017թ. մարտի 7-ին, իսկ էլեկտրոնային թվային ստորագրությամբ հայտի ապահովումը հաստատված է 2018թ. մարտի 3-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ս.Առաքելյան)

3.1 **Առաջին և երկրորդ չափաբաժինների համար թիվ «ՋԳՀ-ԱՇՁԲ-2018/1» ծածկագրով** մրցույթի հանձնաժողովի նիստ հրավիրել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից եզրակացությունը ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, ժամը՝12:00-ին, ՀՏՋՀ գրասենյակի շենքում, հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, Ուլնեցի 31., 4-րդ հարկ:

3.2 Երրորդ չափաբաժնի համար թիվ «ՋԳՀ-ԱՇՁԲ-2018/1» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստ հրավիրել ՀՀ ՖՆ պարզաբանումը ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, ժամը՝12:00-ին, ՀՏՋՀ գրասենյակի շենքում, հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, Ուլնեցի 31., 4-րդ հարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Մասնակցում էին՝ հանձնաժողովի.

Հանձնաժողովի նախագահ
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ) — Սամվել Առաքելյան

անդամներ՝
1.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) — Սարգիս Հովհաննիսյան
2.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) — Էդուարդ Ջանջուղազյան
3.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) — Արթուր Սողոմոնյան
4.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) — Արեգ Եղիյան
5.Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ) — Լիլիթ Սեդրակյան